

այսպէս բնաւորեալ էր պարկեշտն առաքինութիւն 'ի դարս անդ հարցն մերոց՝ զծաղկանց բերել զտիպ, որ էթ է գլխովին բացեալ յերեւան ածիցեն զպայծառութիւն իւրեանց հանգէպ ականն արեւու, 'ի մօտոյ իսկ գունաթափ լինին և զրաւին յանուշահոտ բուրմանէն. իսկ ընդ մայրենի տերեօքն քօղարկեալ, անվթար պահին 'ի գեղն: Բայց Եթէ հենդակայ արտաքս զնա ձգեալ և գիրկս ածեալ անդրանկանն իւրում, եղ զձեռս իւր 'ի գլուխնորա. 'ի վեր հայեցաւ և ասէ. « Եւ իցեն երկինք հանապազ առաքինւոյ սրտին Բաջաջայ, և յաւելցեն Օարմուհեայ այդպիսի որդիս »:

— Եւ հօրն ևս իւրեանց նմանակս, յաւել պարկեշտութիւն:

— Կեցցեն ծնողք մեր անձկալիք, գոչեցին միաձայն որդիքն չորեքին:

— Զաւերժ կեցցեն անբիծք և անարատք մանկունք մեր, կրկնեցին շրթունքն ծնողականք:

Եւ իբր 'ի բազմանուագ գործեաց միաձայնութիւն երգոց՝ ուխտ ամենեցուն սրտից առ հասարակ վերանայր սլանայր ընդ երկինս:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ֆրանսիայի բարոյական առաքնները:

ԳԻՏԵՆ՝ ինչու համար քու դրացիդ երկու տեսակ կերակուր կ'ուտէ, ու դուն չոր հացով կ'ապրիս: — Ասան զի անիկայ խանութը նստած՝ բանին գործին հետ էր, ու դուն կամ դեռ պառկած էիր, կամ զբօսաբանի՝ խաղի հետ էիր: Աւշ ձամբայ որ ելլես՝ հարկաւ պէտք է որ վազելով քալես. անով շուտ կը յոգնիս ու քիչ գործք կը տեսնես:

Նարտարութիւն բաղդին աջ ձեռքն է, չափաւորութիւնը ձախ ձեռքն է:

Օռարձութիւնը իրմէ փախչողին ետեւէն կը վազէ:

Եթէ շուայութենէ աւելի ցաւալի է՝ ժամանակի կողմանէ շուայ ըլլալը. ժամանակը ազնիւ թել մըն է որ անով մեր կեանքը կը հիւսուի:

Քանի որ կեանքերնիս առաջ երթալով վրայ է, ծուլութիւնը այնպէս ծանր ու կաղալով կը քալէ որ աղքատութիւնը շուտ մը վրայ կը հասնի, թէպէտ և առաջ շատ հեռու ըլլար:

Յօսով ապրողը՝ նեղութեամբ կը մեռնի. անոր համար ով որ ժառանգութիւն չունի՝ տասը մատովը թող աշխատի որ ստակ գտնէ:

Նոյլին համար ամէն բան դժուար է. գործունէին առջևը արգելք չկայ:

Նարտար մարդը իր պարտքերը կը վճարէ. վախկոտը վրայէ վրայ կը դիզէ:

Նոյլը եզներն ու արօրը կը ծախէ, գործունեայ մարդը գինին ու պատուական բերքերը:

Եւ զէս իմանալ թէ ինչ է ստակ ըսածդ. ուրիշէն քիչ մը բան փոխ առ, ու կը տեսնես թէ որչափ նախատեսաց ու նեղութեանց մէջ կ'իյնաս, անանկ որ հազիւ կրնաս ազատիլ:

Ով որ շատ պարտք կ'ընէ, իր ազատութիւնը ձեռքէն կը հանէ, ու հազար նեղութեան մէջ կ'իյնայ:

Եւ ինչ աղէկ է իրիկունը առանց կերակուր ուտելու պառկիլ, քան թէ առաւօտը պարտքով ելլել:

Բանը ծախքերը երբոր շատնան մեծամեծ ժառանգութիւններ կը հտցնեն:

Եւ չորդ բաներ գնողը՝ հարկաւորները կը հարկադրի ծախելու:

Ստակ մը ծախելէդ առաջ մատուրներուդ մէջ մէյմը պտըտցուր, ու մտածէ թէ որչափ աշխատեի ես անիկայ վաստակելու:

Եւ զէս որ գործքդ առաջ երթայ, անձամբ գնա. չես ուզեր նէ՝ ուրիշ խրկէ:

Տիրօջ աչքը ձեռուններէն աւելի բան կը տեսնէ:

Քիչը կրկնուելով կը շատնայ:

Կատարկութիւնը ժանգ մըն է որ

աշխատանքէն աւելի կը մաշեցնէ :

Սիշտ գործածուած բանալին փայլուն կ'ըլլայ :

Լէւելի դիւրին է զսպել նախ և առաջ եկած փափաքը՝ քան թէ անոր ետեւէն եկածները :

Պիտուածիւնը ուսումնասիրին համար է . հարստութիւնը աշխատողին համար , իշխանութիւնը քաջութեան համար , արքայութիւնը՝ առաքինուէ :

Փորձառութեան տուած համարները սուղ սուղ կը գնուին , բայց անմիտ մարդկանց շատ հարկաւոր են :

Հպարտին նախաճաշիկը առատութիւն է , կէսօրուան կերակուրը աղքատութիւն , իրիկուանը խաղքութիւն :

ՃՈՒՍԲԱԼԻ ԴԻՊՈՒԱՆՆԵՐ

Լէւորէ՛ք Վարչադրոշմիւն :

ՊԵՐՄԱՆԱՅԻ ՎԵՐՋԻ պատերազմներէն մէկուն մէջ զինուորի մը երկու թեւն ալ ռումբէ մը կը զարնուին կ'իյնան . զօրապետը կը հանէ ասոր վեց ֆուսքնոց ստակ մը կուտայ : “Թողութիւն կ'ընես , կ'ըսէ զինուորը . հրամանքդ կարծես որ երկու ձեռնոց է իմ կորսուցուցածս ” :

Շողորթիւնիւն :

ԵՐԲՈՐ Կափուէոն Լսութեանցի պատերազմը լմնցուց ու յաղթանակով ետ կը դառնար , միտալ մը ընծայեցին իրեն՝ որուն մէկ կողմը Կափուէոնին գլուխը փորած էր , մէկալ կողմը արծիւ մը որ ինձ՝ մը խղճելու վրայ է : “Լս ինչ պիտի ըլլայ ” ըսաւ Կափուէոն : Շողորթ իշխանն ալ պատասխան տուաւ . “Տէր արքայ , ըսաւ . ասիկայ Վաղղիացուոց արծիւն է որ Լնգղիացուոց ինձը խղճելու վրայ է : — Այտ շողորթ , կանչեց վեհանձն կայսրը . ինչպէս կը համարձա-

կիս ըսելու թէ Վաղղիացուոց արծիւը Լնգղիացուոց ինձը խղճելու վրայ է . չե՞ս տեսներ որ Լնգղիացուոց ձեռքէն՝ ես դեռ և ոչ պղտիկ նաւակ մը կրցեր եմ ծովը իջեցնել : Շուտ , հալեցընել տուր ատ միտալը . մէյմըն ալ այդպիսի բան չտեսնեմ ” : Վեղեցիկ օրիւնակ վեհանձն մարդկանց , և զօրաւոր խրատ անխելք շողորթաց :

Չանգրաւի այցելութիւն :

ՍԱՐԴՈՒՆ մէկը անդադար կ'երթայ եղեր իր ճանչորներէն մէկուն գլուխը ցաւցնելու : Սէկ առաւօտ մը նորէն որ կուգայ , մէկալը իր ծառային ձեռքովը ըսել կուտայ թէ տէրս դեռ անկողինն է : “Օհ տար , կ'ըսէ մէկալը , կը սպասեմ որ ելլէ : — Վնա զուրցէ որ հիւանդ եմ , կ'ըսէ տէրը : — Իսկ որ դեղ մը կ'ընեմ իրեն : — Օհ զուրցէ որ ծանր եմ : — Լսի՛ս . ուրեմն գոնէ վերջի բարեւ տամ իրեն : — Վնա ըսէ որ մեռայ : — Վոնէ ափ մը հող ձգեմ վրան ” : Շար չըլլար , պէտք կ'ըլլայ որ ներս մտնէ ան ձանձրալի մարդը :

Լեւորդապաշտութիւն :

ԵՐԲՈՐ շատ կողմերը անխելք աւելորդապաշտութիւն մը կայ որ տասուիրեք հոգւով ոչ երբեք սեղան կը նստին , իբր թէ ան տասուիրեքին մէկը կը մեռնի կ'ըսեն :

Սուան քաղաքին գլխաւոր իշխաններէն մէկը կը տեսնէ օր մը որ սեղանին վրայ տասուիրեք հոգի են , ճար չըլլար՝ չնստիր կերակուրի՝ ինչուան որ մէկ հոգի մըն ալ չըբերեն չնստեցնեն , որպէս զի տասնըչորս ըլլան : Լն առեն սիրտը կը հանգչի , կընստի կ'ուտէ . բայց սեղանէն ելլելուն պէս՝ կաթուած մը կ'իջնայ , յանկարծակի կ'իյնայ կը մեռնի :